ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

29 հոկտեմբերի 2026թ. թիվ 1243

Ա.ՄԱԼՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով Ա.Մալոյանի 2026 թվականի հոկտեմբերի 29-ի գործուղման առաջադրանքը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Մալոյանին ս/թ հոկտեմբերի 29-ին մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվող ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի (CBD) Կողմերի 17-րդ համաժողովին՝ COP17-ին մասնակցելու համար:

2. Գործուղումն իրականացնել «Hyundai Tucson 2.0, 2012թ.» մակնիշի 496 CS 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արտավազդ Բեջանյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Մալոյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

10/29/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: DALLAKYAN MERI 5303860493 Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր